



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

83

2
2-85

2
L-85

2010



2387

48

2
1-97

ԼՍԱՐԱՆ

ՀՈԳԵՇԱՀ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

ԵՒ

ԽՐԱՏԱԿԱՆ ԲԱՆԻՑ,

ԵՒՍ ԵՒ

ՊԷՍՊԷՍ ԿԵՆՅԱԴՕԳԸՆՑ ԳԻՏԵԼՆԱՅ.

Ա. Ի. Ա. Գ. Ե. Բ. Բ. Ե. Բ. Բ. Բ.

Տպագրեալ

Հրամանաւ Վեհափառ Տեառն

Տեառն ԳԵՈՐԳԱՅ Գ,


Աստուածընտիր Կաթողիկոսի Ամենայն Հայոց.



Ի ԹԷՌԴՈՒՍԻՍ.,

Ի Տպարանի Խաչիպեան Ուսումնարանին.

1868 = ԹՅԺԷ.



354

Handwritten signature or mark at the bottom right corner.

Չլսարանս զայստիկ ի խնդրոյ եւ ի յորդո-
րանաց եկեղեցական եղբարց ոմանց երկա-
սիրեալ, եւ արդեամբք վսեմապատի ՄԿՐՏԻՉ
ՊԷՅԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՐԷԻՉԵԱՆՅ սպագրեալ
ընծայեմք ի վայելս տօնասիրաց եւ ուսումնա-
սենց մերազնեայց.

ԳԱՅՐԻԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆ.

Ի Մարտի 1868.

Ի ԹԷՈՂՈՍԻԱ.

108648-42

ԱՒԱԳ ԵՐԵՐՇԱՐԹԻ.



673
50

ըխառս Տէրն մեր չկամենալով որ
իւր առաքեալներն ու աշակերտնե-
րը տկարանան ու գայթակղին՝ երբ
որ տեսնեն քանի մի օրէն իրենց
երկնաւոր վարդապետին Հրէից ձեռ-
քը մատնուիլը, չարչարուիլն ու խաչուիլը, այսօ-
րուան օրս ասաց նոցա. «Գիտէք զի յետ երկուց ա-
ւուրց զատիկ լինի. եւ Որդի մարդոյ մատնի ի խաչ
եւանել». — Այս գիտէք որ երկու օրէն, Հինգշաբթի
օրը՝ զատիկ է. ուրեմն այս ալ գիտցէք որ ես նոյն
օրը Հրէից ձեռքը պիտի մատնուիմ՝ ու պիտի խա-
չուիմ: Թէ որ պարզ հասկընային աշակերտներն այս
մարգարէութեան զօրութիւնը, պէտք էր զանազան
հարցմունքներ անէին Յիսուսի, եւ ասէին թէ ար-
դեօք ճար չկայ չմատնուելու, եւ այնպիսի դառն
ու նախատական մահուամբ չմեռնելու. Յուզան ալ
այն ժամանակէն պէտք էր մտածէր՝ թէ այդ մար-
գարէութիւնն անող վարդապետին մատնութեանը
գործիք եւ միջնորդ լինելը սրբան յանդգնութիւն
ու չարութիւն է. բայց չհասկըցան՝ ոչ Յուզա իս-
կարիովտացին եւ ոչ միւս աշակերտները:



Այս աւագ երեքշաբթի օրս էր որ ասաց Քրիստոս այն խօսքը, եւ այս օրս էր որ ընդարձակ քարոզութեամբ գուշակեց իւր աշակերտաց՝ երուսաղեմայ տաճարին կործանումը, աշխարհիս վերջը, իւր նորէն փառաւոր դալուստը յաշխարհ, անելու դատաստանը, արգարոց յաւիտենական վարձատրութիւնը եւ մեղաւորաց յաւիտենական դատապարտութիւնը: Չուշանամք ասելու որ այն կենարար վարդապետութեան մէկ մասը լինելով սար կռասնաց նշանաւոր ու խրատական առակը, այսօրուան ժամերգութեան մէջ շատ անգամ յիշատակութիւն կլինի յիւսր եւ իսասուսն կաւսանաց առակին. այնչափ որ շատ տեղ սովորութիւն եղած է ռամկաց մէջ՝ յիւսր իսասուսնի օր անուանել աւագ երեքշաբթիս: Ուստի թէպէտ այն աւետարանը կկարդացուի երեկոյեան ժամերգութեան ատենը, բայց մեք առաջ անոր գլխաւոր մասանցը՝ որով եւ տասն կուսանաց առակին՝ բացատրութիւնը տամք:

Երբոր Յիսուս տաճարէն դուրս ելաւ ու գէպ ի Ձիթենեաց լեռը կերթար՝ գիշերն այնտեղ անցընելու աղօթքով, աշակերտները մօտեցան քովն ու ասին զարմանալով ու զմայլելով, «Վարդապետ, տես որպիսի են քարինքս, եւ որպիսի շինուածք.» — Կըտեսնես այս ինչ զարմանալի շէնք է, ինչ խոշոր ու գեղեցիկ քարեր են: Յիսուս պատասխան սուաւ նոցա թէ «Տեսանէք զայդ ամենայն շինուածս. ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ թողցի այդք քար ի քարի վերայ որ ոչ քակտեսցի.» — Այդ բոլոր ահագին ու հոյա-

կապ շինուածքը կտեսնէք. իրաւ որ զարմանալի շէնք է. բայց այս ալ գիտցէք որ այնպէս պիտի կործանի քանդուի որ մէկ քարը մէկալին վերայ պիտի չմնայ:

Երուսաղեմի տաճարը այնպիսի փառաւոր շէնք էր որ աշխարհիս եօթը հրաշալեաց մէկը սեպուած էր հին ատենը, իրեն մեծութեանը, հարստութեանն ու գեղեցկութեանը համար: Դաւիթ մարգարէն ունեցած էր այս ջերմեռանդ մտածութիւնն որ Աստուծոյ տապանակին համար մեծ ու վայելուչ տաճար մի շինէ. բայց Աստուած նախան մարգարէին ձեռքովը յայտնեց Դաւիթի որ թէպէտ գիտաւորութիւնը բարի եւ ընդունելի է, բայց անոր կատարումը պիտի չանէ ինքը. որովհետեւ շատ պատերազմներ արած եւ շատ մարդկանց արեանը թափուելուն պատճառ եղած է. հապա նորա որդին Սողոմոն իմաստունը պիտի կանգնէ այն տաճարը. Դաւիթ ալ բաւական համարեցաւ այն շէնքին համար պէտք եղած նիւթերը պատրաստել, ու մեռնելէն առաջ ապսպրեց Սողոմոնի որ անպատճառ ձեռք զարնէ տաճարին շինութեանը:

Քրիստոսի թուականէն դրեթէ 1000 տարի առաջ սկսաւ Սողոմոն տաճարին շէնքը, եւ ինը տարուան մէջ վերջացուց: Այն տաճարը մէկ քանի անգամ արուեցաւ, եւ Հրէից բարեպաշտ թագաւորներուն ձեռքովը նորոգուեցաւ. բայց Բաբելացոց նաբուգոդոնոսոր թագաւորին Հրէաստանի տիրած ժամանակը հիմնայատակ կործանեցաւ Քրիստոսէ 584 տարի առաջ: Յիսուսուերկու տարի այնպէս գեսնի հաւա-

տար աւերակ մնալէն ետեւ, Պարսից Կիւրոս թագաւորին հրամանովը սկսաւ նորէն շինուիլ, ու Դարեհ Վշտասպեայ թագաւորին ժամանակը վերջացաւ: Հրէաստանի Հերովդէս թագաւորին օրերը տաճարը շատ աւրուեր խախտեր էր. նա ձեռք զարկաւ ի հիմանց նորոգելու զայն, եւ ինը տարուան մէջ լմնցուց, թէպէտեւ ամենայն զարգարանքներով լմննալը քառասուն վեց տարի քշեց, ինչպէս որ Հրեայք ալ ասին մէկ օր մը Յիսուսի թէ «Զքառասուն եւ զվեց ամ շինեցաւ տաճարս այս. եւ դու յերիս աւուրս կանգնես զսա.» — Այս տաճարը 46 տարուան մէջ շինուեցաւ. գուն երեք օրուան մէջ պիտի շինես լմնցընես: Այն տաճարը շատ տարբեր էր Սողոմոնի շինածէն ու Զօրաբաբելի կանգնածէն, թէպէտեւ տեղը նոյնն էր:

Յովսեպոս երբայեցի պատմիչը, որ աչքովը տեսած էր տաճարը, այսպէս կանէ անոր ստորագրութիւնը: Բուն տաճարը 60 կանգուն երկայնութիւն ու 60 կանգուն լայնութիւն ունէր, իսկ բարձրութիւնն էր 100 կանգուն. երկու կողմէն ալ քսանական կանգուն լայնութեամբ թեւեր կային: Շէնքին բոլոր քարերն ալ ճերմակ ու կարծր էին, ամէն մէկը 25 կանգուն երկայնութեամբ, 12 կանգուն լայնութեամբ եւ 8 կանգուն բարձրութեամբ. ուստի իրաւունք ունէին առաքեալներն ասելու թէ «Տես որպիսի են քարինքս.» — Նայէ ինչ քարեր են: Շինուածքին ճակատը թագաւորական պալատի կնմանէր, մէջտեղի կտորը շատ բարձր, քովինները ցած: Դռներուն բարձրութիւնն

ալ գրեթէ շէնքին բարձրութեանը կհասնէր, եւ մեծ գրանը վերի շեմէն գոյնզգոյն գիպակ կախուած էր՝ վարագուրի նման: Տաճարին չորս կողմը շատ հոյակապ ու գեղեցիկ սիւնազարդ լայն ու բարձր սրահներ ու գաւիթներ կային, որոց յատակն ու դիմացը գոյնզգոյն մարմարիոն շարած էր: Շէնքին տեղը բարձր բլուրի վերայ էր՝ հարիւր քսանհինգ քայլ քառակուսի միջոց. չորս բոլորը երեք կարգ պարիսպ քաշած էր՝ նոյնպէս քառանկիւն. այս պարիսպները տեղ տեղ մինչեւ 300 կանգուն բարձրութիւն ունէին, ամէնն ալ քարաշէն, եւ քարերուն ամէն մէկը մինչեւ 40 կանգուն երկայնութիւն ունէր. իրարու հետ կապարով ու երկրթով կապուած: Թէ տաճարին եւ թէ պարիսպներուն գլխաւոր դուռը արեւելեան կողմէն էր, բայց չորս կողմէն ալ կային մեծամեծ դռներ, որոց մէջ մինչեւ 90 կանգուն բարձրութիւն ու 25 կանգուն լայնութիւն ունեցողներ կային. սիւներ ալ կային տաճարին գաւիթներուն մէջ որ երեք հոգի հազիւ կրնային գրկել, վասն զի ամէն մէկը 27 տանաչափ թանձրութիւն ունէր. թող ուրիշ շատ գեղեցկութիւններն ու աշտարակները: Ուստի առաքեալները կասէին. «Տես որպիսի են քարինքս, եւ որպիսի շինուած. եւ որպիսի գեղեցիկ վիճօք եւ աշտարակօք զարգարեալ է»: Երբոր Յիսուս պատասխանեց իրենց թէ «Ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ թողցի այդք քար ի քարի վերայ որ ոչ քակտեսցի», զարմացան մնացին. չէին կրնար երեւակայել որ մարդիկ կամ ժամանակը համարձակին այնպիսի շէնքը

կործանել, քանդել, գետնի հաւասար անել, կարծէին որ անպատճառ պիտի մնան այն շէնքերը մինչեւ աշխարհիս վերջը, եւ Քրիստոսի գուշակութիւնն ալ այն մտքով հասկըցան, ինչպէս որ իրենց խօսքերէն ալ յայտնի է:

Երուսաղեմին արեւելեան կողմը՝ տաճարէն 8000 կանգունի չափ հեռու է Ձիթենեաց լեռ ասուած լեռնակը, ուսկից կերեւնար ոչ միայն տաճարը, այլ եւ բոլոր Երուսաղէմ քաղաքը: Յիսուս նստաւ այն լեռն ու մտածելով կնայէր անոնց վրայ, առաքեալներն ալ իրենց լած մարգարէութեանը վրայ արտոմած՝ կոտորած սրտով քաշուած էին մէկգի: Վերջապէս Պետրոս, Յակովբոս, Յովհաննէս եւ Անդրէաս սիրտ արին, մօտեցան Յիսուսի քովն ու ասին. «Ասա մեզ, Երբ լինիցի այդ, եւ կամ զինչ նշան իցէ յորժամ կատարելոց իցէ այդ ամենայն. եւ կամ զինչ նշան իցէ քոյոյ գալստեանն, եւ վախճանի աշխարհիս.» — Վարդապետ, ասա մեզի, Երբ պիտի լինի այդ սոսկալի բանը, կամ ինչ նշաններով կարելի է իմանալ որ այն ժամանակը մօտեցեր է. նմանապէս ինչ բանով կրնայ իմացուիլ թէ Երբ պիտի գաս նորէն, կամ աշխարհս Երբ պիտի վերջանայ:

Երկու գլխաւոր բաներ էին աշակերտաց հարցուցածները. Յիսուս ալ երկուսին պատասխանը մէկէն տուաւ, այսինքն թէ տաճարը Երբ պիտի կործանի, եւ աշխարհիս վերջը ինչպէս պիտի հասնի, ինքը Երբ պիտի գայ, վերջին դատաստանն ինչպէս պիտի անէ:

Տաճարին ու Երուսաղեմայ կործանումը այս կերպով պատմեց Քրիստոս իւր աշակերտացը: Առաջ, ասաց, զանազան անձինք պիտի ելնեն, ու «մեսիան ես եմ» ասելով պիտի խաբեն շատ մարդիկ, — ինչպէս որ եղաւ Երուսաղեմայ կործանմանէն առաջ: Եւ այս ճշմարիտ է. ամէն անգամ որ Աստուած մէկ ազգ կամ մէկ ժողովուրդ մի չարաչար պատիժներու տակ ձգել ուզէ, առաջ կ'իջողու որ մէջը պէսպէս մոլորութիւններ՝ խաբէութիւններ շատնան, Աստուծոյ վախը շատին սրտէն ելնէ, շատին խղճմտանքը կուրնայ սիրտը խստանայ եւ հաւատարմութիւնը կորսուի. մարդիկ անիրաւութեամբ մէկզմէկ զրկեն, պատերազմով մէկզմէկ ջարդեն, ազգ ազգի դէմ՝ թագաւոր թագաւորի դէմ մնոտի պատճառանքներով կըռուրաին, եւ մինչեւ բարեկամք եւ ազգականք մէկզմէկ մատնեն, չարչարեն, սպաննեն:

Քրիստոսի ծննդենէն ետքը 70 տարի անցած էր, երբոր Հրեայք գլուխ քաշեցին ոտք ելան Հռովմայեցւոց դէմ. բայց իրենք ալ իրենց մէջ անմիաբան լինելով, երեք խումբ բաժնուեցան մէկմէկու հակառակ. եւ այն միջոցին որ Վեսպասիանոս կայսեր որդին Տիտոս շատ զօրքով եկեր Երուսաղէմը չարաչար պաշարեր էր դրսէն, Հրեայք ներսը մէկզմէկ կ'ջարդէին սոսկալի կատաղութեամբ, այնպէս որ տաճարին դաւիթներն ալ արիւնով լուացուեցան. թող քաղաքին ամէն մէկ փողոցին մէջ եղած ջարդերը, ահագին կրակները եւ սարսափելի սովը, յորում Հրեայք ըստիպուեցան մինչեւ իրենց կօշիկները, կաշի գօտի-

ները ու վահաններուն վրայի մորթին կրծելու ուտելու. մինչեւ մայր մի եղաւ՝ որ իրեն զաւակին մարմինը եփեց ու կերաւ, եւ շատ մարդիկ յուսահատաբար իրենք զիրենք մեռուցին: Այնչափ էր քաղաքին ու քաղաքացւոց խեղճութիւնն որ ինքն իսկ Տիտոս ձեռքերը երկինք վերուցած՝ աչքը արցունքով ազազակեց թէ «Անպարտ եմ ես այս թշուառութիւններէն, Տէր Աստուած. իրենք Հրեայք են իրենց կորստեանը պատճառ:» Վերջապէս երբոր հագարններով Հրեաներ տաճարը քաշուած՝ անկից կուզէին պատերազմիլ Հռովմայեցւոց դէմ, եւ կամ անոր աւերակներուն տակը թաղուիլ, մտան Հռովմայեցիք ներս, կրակ տուին տաճարին, այրեցին մոխիր դարձուցին մէջի բոլոր ժողովրդովը, քաղաքն ալ առին՝ հիմնայտակ կործանեցին, եւ սրչափ մարդ որ գրտան թրէ՝ կրակէ ու սովէ ազատած, քշեցին գերի տարին: Երուսաղեմի ու տաճարին կործանմանը վրայ զատ լսարան կունենամք ուրիշ անգամ: Այժմ այսքանն ասեմք թէ այս խեղճութիւններն է ահա որ Տէրն մեր իբրեւ աչքին առջեւը տեսնելով կպատմէ աշակերտաց՝ այս խօսքերով. «Յորժամ լսիցէք պատերազմունս եւ համբաւս պատերազմաց, զգոյշ լերուք, մի զարհուրիցիք եւ մի խռովիցիք. զի պարտ է լինել նախ այնմ ամենայնի, այլ չեւ է կատարած.» — Քանի որ պատերազմներու ձայներ միայն լսէք, չվախնաք ու չշիթիք. անոնք պէտք է որ պատահին, բայց անով չեն վերջանար խեղճութիւնները: «Յայնժամ եզիցին սովք եւ սրածութիւնք եւ սասա-

նութիւնք ի տեղիս տեղիս, այլ այն ամենայն սկիզբն է երկանց.» — Այն ատեն պիտի լինին շատ տեղ սովեր, ժանտամահեր ու գեանաշարժեր, բայց անոնք ամէնն ալ դեռ պատահելու խեղճութիւններուն ըսկիզբներն են:

Յետոյ գուշակեց Քրիստոս նոյն իսկ իւր աշակերտաց եւ ուրիշ քրիստոնէից քաշելու նեղութիւնները, հալածանքները, նահատակութիւնները. քաջալերեց զանոնք որ ամենեւին հոգ չանեն թէ ինչ պատասխան պիտի տան՝ երբոր դատաւորներու թագաւորներու առջեւ տարուին իրենց քրիստոնէութեանը համար. «Ես տաց ձեզ, կասէ, բերան եւ իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ կամ տալ պատտխանի ամենայն հակառակորդքն ձեր.» — Ես ձեր բերանը այնպիսի իմաստուն խօսքեր կղնեմ որ ձեր սր եւ իցէ հակառակորդները չեն կրնար անոնց դէմ կենալ: «Յորժամ տեսանիցէք շուրջ պատեալ զօրօք զերուսաղէմ, յայնժամ գիտասլիք թէ մերձ է աւեր նորա.» — Երբոր տեսնէք Երուսաղէմը չորս դիէն Հռովմայեցւոց զօրքերովը պաշարուած, այն ատեն հասկըցէք որ անոր ու տաճարին կործանման ժամանակը հասեր է, ինչպէս որ գուշակած է նաեւ Դանիէլ մարգարէն. այն ատենը Երուսաղեմի մէջ գրտնուողները պէտք է վախչին, կասէ, լեռները, — ինչպէս որ արին քրիստոնեայք՝ Երուսաղեմի առնուած ժամանակը, — գուրօր գտնուողներն ալ ներս չմանեն. վասն զի Աստուծոյ վրէժխնդրութեան ժամանակն է այն ժամանակը Հրէից վրայ, ու պէտք է

որ մարդարէից ձեռքով արած սպառնալիքները կատարուին : Այնպիսի սոսկալի տագնապ, շփոթութիւն, յուսահատութիւն պիտի տիրէ այն միջոցին չրէից վրայ որ իրեն տանը երգիքը գանուողը պիտի չկարենայ վար իջնիլ որ բան մի առնու փախչի, դաշտի մէջ գանուողն ալ պիտի չկարենայ ետ դառնալ որ հագուտը առնու. երուսաղէմը բոլորովին պիտի քանդուի՝ ոսնակոխ պիտի լինի հեթանոսներէն, եւ բնակիչները գերի պիտի երթան, պիտի ցրուին բոլոր աշխարհիս երեսը, « Մինչեւ կատարեսցին ժամանակք հեթանոսաց. » այսինքն մինչեւ որ հեթանոսներուն ալ անօրէնութեան չափը լցուի, ու նոքա ալ իրենց պատիժներն առնուն : Ազօթք արէք որ ձեր փախուստը գոնէ ձմեռ ժամանակ չպատահի. վասն զի այնպիսի նեղութիւն պիտի քաշեն երուսաղէմացիք որ նմանը ոչ եղած է երբէք եւ ոչ պիտի լինի : Ազէկ որ Աստուած իւր ընտրելոցը սիրոյն համար՝ այն միջոցը պիտի կարճեցընէ. ապա թէ ոչ, մէկ մարդ մի ողջ չէր մնար. « եւ եթէ ոչ « էր կարճեալ Աստուծոյ զաւուրսն զայնոսիկ, ոչ ապա « րէր ամենայն մարմին. բայց վասն ընտրելոցն կար- « ճեսցին աւուրքն այնոքիկ » :

Տէրն մեր տաճարին ու երուսաղէմին կործանումը այսպիսի ահաւոր կերպով նկարագրելէն ետքը, աշխարհիս վերջերը պատահելու սոսկալի աւերութիւններն ալ երուսաղէմի կործանմանը նմանցընելու պէս կպատմէ : Աշխարհիս վերջն որ մօտենայ, կասէ, այնչափ սուտ քրիստոսներ, նեռեր, ու սուտ մարդարէ-

նէր պիտի ելնեն որ ձեռքերէն գայ նէ՝ սակաւաւոր ընտրեալներն ալ պիտի խաբեն մոլորցընեն. բայց դուք զգուշացէք, ահա ամէն բան առաջուց ասի ձեզի :

Իսկ իմ երկրորդ ահաւոր գալուստս որ կհարցընէք թէ երբ ու ինչպէս պիտի լինի, նախ այս ասեմ՝ ձեզի որ ամենեւին չխաբուիք՝ երբոր մէկը մէկալը ասեն՝ թէ Ահա Քրիստոս եկեր է, այս ինչ անապատին մէջը կքարոզէ, կամ թէ այս ինչ տեղը պահուրտած է. « եթէ ասիցեն ձեզ, ահաւանիկ յանապատի է՝ մի ելանիցէք. եւ թէ ահա յշտեմարանս է՝ մի հաւատայցէք. » վասն զի իմ գալուստս այնպէս յանկարծակի, այնպէս յայտնի ու այնպէս փառաւոր կերպով պիտի լինի, ինչպէս որ երկնքին երեսը փայլակին երեւնալը, որ արեւեւքէն փայլելուն պէս՝ մինչեւ արեւմուտք կտեսնուի. եւ բոլոր մարդկային ազգը շուտ մը իմ առջեւ պիտի գայ այնպէս՝ ինչպէս որ արծիւները մարմին գանուած տեղը կվազեն. « Ուր մարմին է, անգր եւ արծուիք ժողովեսցին : » — Այս խօսքը առակի պէս էր չրէից մէջ :

Այն ժամանակը կարգէ դուրս փոփոխութիւններ՝ նշաններ պիտի լինին արեւուն՝ լուսնին ու աստղերուն վերայ, երկրիս երեսի ժողովուրդներն ալ այնպէս իրար պիտի անցնին ու պիտի տագնապին որ նոցա գոռում գոչումը՝ կատղած ծովու գոռալուն պիտի նմանի : Անոր ետեւէն արեգակն ու լուսինը պիտի խաւարի, երկնքէն աստղեր պիտի թափին, ու կարծես թէ ամէնն ալ իրենց տեղերէն պիտի խախտին շփոթին. եւ ահա այն ժամանակը պիտի երեւնայ

երկնքին երեսը իմ նշանս, — որ է սուրբ խաչը, — անոր ետեւէն ես պիտի դամ ամպերուն վերայ «զօրութեամբ եւ փառօք բազմօք», ահաւոր կերպով ու մեծ փառաւորութեամբ: Պիտի հրամայեմ հրեշտակներուս, որ ահագին ձայնով՝ իբրեւ փող վարնելով՝ ժողվեն առջեւս իմ ընտրեալներս աշխարհիս ամէն կողմէն:

Այս իւր գալտեան ահաւորութիւնը, մանաւանդ յանկարծական լինելը, զանազան խորհրդաւոր ու գեղեցիկ օրինակներով հաստատելէն ետքը՝ ասն կուսանաց առակը բերաւ Քրիստոս:

Տասը կուսանք կային ասաց՝ փեսայի ու հարսի առջեւ զնացող, ինչպէս որ սովորութիւն էր: Սոցա մէջէն հինգը յիմար էին, հինգը իմաստուն: Ամէնքն ալ իրենց լապտերները հետերն աւեր էին՝ որ գիշերը լոյս ունենան. բայց իմաստունները իրենց լապտերներուն հետ եղ ալ առին զատ ամաններով, իսկ յիմարները եղ չառին: Փեսան որ ուշացաւ գալու, ամենուն ալ քունը կոխեց, քնացան: Կէս գիշերուն ձայն ելաւ թէ «Ահա փեսայ գայ, արի՛ք ընդ առաջ նորա»: Ելան ամէնքն ու իրենց լապտերները շրտկըտեցին: Յիմարներն ասին իմաստուններուն թէ Ձեր եղէն սուէք մեզի, վասն զի մեր լապտերները մարելու անցնելու վերայ են. «Տուք մեզ յիւղոյգ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքս մեր»: Իմաստունները պատասխան տուին. «Վախեմք թէ մեր եղերը չեն բաւեր մեզի ու ձեզի միանգամայն. ալէկն այն է որ երթաք եղ ծախողներէն առնէք ձեզի պէտք

եղածին չափ: Նոքա զնացին չզնացին, փեսան եկաւ, ու որոնք որ պատրաստ էին՝ մասն հարսնիքը, գուռը փակուեցաւ: Յետոյ եկան միւս կուսանքն ալ ու ասին. «Տէր տէր, բաց մեզ»: Նա պատասխան տուաւ թէ Շիտակն ասեմ, ես զձեզ չեմ ճանչնար. «Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ գիտեմ զձեզ»:

Այս առակին մէջ իմաստուն կուսանքը արգօտ հաւատացելոց օրինակ են, որ ոչ միայն հաւատոյ լապտերն ունին, այլ եւ բարի գործերու եղը. իսկ յիմարներն օրինակ են անոնց որ թէպէտ հաւատով քրիստոնեայ են, բայց իրենց հաւատքին լոյս տուող եղը, այսինքն ուղորմութիւն, բարեգործութիւն չունին, ու չեն գիտեր որ «Հաւատք առանց գործոց մեռեալ են». եւ թէպէտ իրենք կպարծենան որ ուղղափառ քրիստոնեայ են, բայց Քրիստոս պիտի չճանչնայ զանոնք. «Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ գիտեմ զձեզ»: Վախեմք ուրեմն ու սարսափիմք այս խօսքէն, ինչպէս որ կասեմք նաեւ այսօրուան շարականին մէջ. «Երկնչիմք ի քէն Տէր, զարհուրեալք ի պատասխանւոյն, զամէնն ասելով եթէ ոչ գիտեմ զձեզ»: Եւ որովհետեւ երկնաւոր դատաւորին գալէն ետեւ, կամ թէ այս աշխարհէս մահուամբ անդին որ երթամք, կարելի չէ բարի գործեր ձեռք ձգել ու վառ պահել մեր հաւատքը, նայիմք որ մէկ ժամ առաջ՝ քանի որ ողջ եմք՝ բարեգործութեանց եղը պատրաստ ունենամք: Այս խրատը կուտայ մեզի նաեւ շարականին խօսքը թէ «Փութասցուք կանխեալ յա-

ուաջ քան զձայն աստուածային բարբառոյն, զի մի մնասցուք արտաքս ըստ շիջման հինգ կուսանացն» :

Տէրն մեր այս պատմութիւնը կ'պատմէր նաեւ այն մտքով որ աշակերտները եւ ամենայն քրիստոնեայք չսպասեն յայտնի նշաններ տեսնելու՝ թէ աշխարհիս վերջանալն ու իրեն գալուստը որ ժամանակ՝ որ օր պիտի պատահի. ինչպէս որ, ասաց, Ջրհեղեղին հասնին ալ չիմացան մարդիկ առաջուց՝ նոյի ժամանակը, ու չհաւատացին գալուն. այլ կուտէին կըխմէին՝ հարսնիքներ կանէին, «Մինչեւ եկն Ջրհեղեղն եւ եբարձ զամենեսին» : Ուստի միշտ պատրաստ եղէք ու արթուն կեցէք ասաց. «Արթուն կացէք, զի ոչ գիտէք զօրն եւ ոչ զժամ» : Միանգամայն խրատ կուտայ որ փոխանակ անօգուտ հետաքրքրութեամբ քննելու թէ գատաստանին օրը երբ պիտի գայ, ամէն մարդ նայի որ գատաստանին ատենը պարզերես գտնուի Աստուծոյ առջեւը. ասոր համար՝ Աստուծոյ իրեն տուած շնորհքները աղէկի բանեցընէ, ու քանի որ կեանք ունի՝ բարի գործերով հարստանալու աշխատի : Եւ այս խօսքը հաստատելու մտքով՝ ուրիշ առակ մի պատմեց :

Մարդուն մէկը հեռու աշխարհք պիտի երթար, ասաց. առջեւը կանչեց իւր ծառաները. որուն տուաւ հինգ քանքար արծաթ, որուն երկու, որուն մէկ, ամէն մէկուն բնական կարողութեանը՝ այս կամ այն վիճակին յարմարութեանը նայելով — «Իւրաքանչիւր ըստ իւրում կարի.» — ապսպրեց նոցա որ այն քան-

քարները շահեցրնելու աշխատին, ու ելաւ գնաց : Ժամանակ անցնելէն յետոյ եկաւ տէրն ու կամեցաւ հաշիւ տեսնել ծառաներուն հետ որ հասկընայ թէ ո՛վ ինչ վաստակեր է : Նոցա մէջէն հինգ քանքար առնողն եկաւ, Տէր իմ՝ ասաց, դուն ինձի հինգ քանքար տուեր էիր, ահա անով հինգ քանքար ալ շահեցայ : Պատասխանեց տէրը թէ «Շատ աղէկ, ապրիս իմ բարի ու հաւատարիմ ծառաս. եւ որովհետեւ այդ քիչ բանին մէջ այդքան հաւատարմութիւն ցուցուցիր, աւելի մեծ գործի վերայ զնեմ զքեզ. արի մըտիր տիրոջը ուրախութեան տեղը. «Ազնիւ, ծառայ բարի եւ հաւատարիմ. որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մնա յուրախութիւն տեառն քոյ» : Երկու քանքար առնողը՝ երկու քանքար աւելի շահեր էր. նա ալ նոյն պատասխանն ու գովասանքը լսեց տիրոջմէն : Իսկ մէկ քանքար առնողը ինչ անէ աղէկ. — գնացեր՝ գետինը փորեր ու քանքարը թաղած պահեր է եղեր ծուլութեամբ, անհոգութեամբ ու չարութեամբ. ուստի տիրոջը առջեւ ձայն տրուած ժամանակին, առաւ՝ կասէ՝ այն մէկ քանքար ստակը թաշկինակի մէջ զգուշութեամբ կապած տարաւ՝ ասաց յանդուգըն խօսքերով. Տէր իմ, ես գիտէի որ դուն խիստ՝ այսինքն սերտ մարդ ես. չցանած բանդ կըհնձես, չըտուած բաներդ առնելու կնայիս. ուստի վախցայ, գնացի՝ քանքարդ գետնի առկ պահեցի. ահա քու բանդ քեզի կ'արձընեմ : Տէրը բարկացաւ վերան ու ասաց. Չար ու ծոյլ ծառայ. թէ որ զիս այդպէս ա-

նիրաւ մարդու տեղ դրած էիր, պէտք էր որ իմ ստակս սեղանաւորներու (սառափի) ձեռք տայիր, ես այժմ շահովը հանդերձ կառնէի անոնցմէ, ինչպէս որ կանեն ազահ ու կծծի մարդիկ՝ որոց գու զիս կնամանցընես: Յետոյ հրամայեց իւր մարդոցն որ առնուն ձեռքէն քանքարն ու տասը քանքար ունեցողին տան. Ով որ աղէկութիւն մի ունի, եւ ունեցածը գիտէ պահպանել ու աճեցընել, արժանի է՝ ասաց՝ որ աւելի ալ տրուի անոր. իսկ ով որ ունեցած շնորհքը չբանեցնէր, այն ալ ձեռքէն կառնուի. «Սմենայնի որ ունիցին՝ տացի եւ յաւելցի. եւ որ ոչն ունիցի՝ եւ զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ»: Այն բաւական չէ, առէք այդ անպիտան ծառան ու դրսի խաւարը ձգեցէք որ լայ եւ ողբայ՝ ախուսները կրճտելով կատաղութենէն:

Իսկ վերջին դատաստանն այս կերպով պիտի լինի ասաց Քրիստոս: Երբոր դամ ես իմ աստուածային փառաւորութեամբս ու հրեշտակներու անհամար բազմութեամբը եւ նստիմ՝ թագաւորական աթոռս, աշխարհիս երեսի բոլոր մարդիկը առջեւս պիտի ժողվուին, եւ պիտի զատեմ անոնց մէջէն արդարներն ու մեղաւորները՝ ինչ կերպով որ հովիւը կզատէ ոչխարները այծերէն. արդարները պիտի կեցընեմ իմ աջ կողմս, մեղաւորները ձախ կողմս. եւ թէպէտ ամէն բարեգործութեան վարձատրութիւն ու ամէն չարագործութեան պատիժը պիտի որոշուի այն ժամանակը, բայց ամէն բանէ առաջ ողորմածութիւնը պիտի

վարձատրուի ու անողորմութիւնը պիտի պատժուի: Պիտի ասէ թագաւորն իւր աջ կողմը կեցողներուն. Ո՛վ իմ Հօրս օրհնած հաւատացեալները, եկէք ժառանգեցէք վայելեցէք այն թագաւորութիւնն որ նա ի յաւիտենից պատրաստած է ձեզի համար. «Եկայք օրհնեալը Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն ի սկզբանէ աշխարհի»: Անոր համար որ քաղցած էի, կերակուր տուիք ինծի. ծարաւ էի, ջուր տուիք ինծի. օտար՝ պանդուխտ էի, տեղ տուիք ինծի. մերկ էի, հագուստ տուիք ինծի. հիւանդ էի, զիս տեսնելու եկաք. բանտի մէջ էի, զիս մխիթարելու եկաք: Արդարները զարմանալով պիտի հարցընեն թէ երբ արեւ եմք քեզի այդ աղէկութիւնները. նա պատասխան պիտի տայ թէ հաւատացէք որ այդ բաները խեղճ մարդոց որ արիք՝ ինծի արածի պէս էք. «Որովհետեւ արարէք միում ի փոքրրկանցս յայսցանէ, ինձ արարէք»: Յետոյ պիտի դառնայ մեղաւորներուն ասէ. Գնացէք քովես, սով անիծածներ, այն կրակն որ յաւիտենական է, ու պատրաստուած էր սագայելին ու նորա չար հոգիներուն համար. «Երթայք յինէն, անիծեալք, ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալն է սատանայի եւ հրեշտակաց նորա». վասն զի ես քաղցած էի, դուք ինծի հաց չտուիք. ծարաւ էի, ջուր չտուիք. օտար էի, զիս ներս չառիք. մերկ էի, չհագուեցուցիք. հիւանդ էի, բանտն էի, չեկաք որ տեսնէիք: Նոքա պիտի հարցընեն թէ՛ սով Տէր, մեք երբ տեսանք զքեզ քաղցած կամ ծարաւ կամ օտար կամ մերկ կամ հիւանդ կամ

573
40



բանտի մէջ, որ աղէկութիւն չանէ ինք. քեզի. Թագա-
 ւորը պատասխան պիտի տայ նոցա ալ թէ Իրաւ կա-
 սեմ ձեզի. որովհետեւ այդ աղէկութիւնները չարիք
 դուք այս փոքր ու խեղճ մարդկանց մէկուն, ինծի
 ալ չէք արած. «Ամէն ասեմ ձեզ, որովհետեւ ոչ
 արարէք միում ի փոքրկանցս յայսցանէ, եւ ոչ ինձ
 արարէք»: Եւ այնուհետեւ արդարները պիտի երթան
 յաւիտենական կեանքը, մեղաւորներն ալ յաւիտենա-
 կան տանջանքը:

Ասոնք են ահա Աւագ Երեքշաբթի օրս յիշատա-
 կուած գլխաւոր խորհուրդները, եւ ասոնց յարմար-
 ցուած են ընդհանրապէս նաեւ բոլոր այսօրուան ժա-
 մերգութեան ուրիշ կտորները, մանաւանդ շարա-
 կանները, գեղեցիկ ու վսեմ ազօթական խօսքերով.
 օրինակի համար այս՝ որ Համբարձին է.

«Շնորհիւ մեզ Տէր արթնութիւն ընդ իմաստուն
 կուսանացն, եւ զհոգւոց մերոց լապտերս պայծառացս»:

Տէր, դուն մեզի արթնութիւն տուր
 Հինգ իմաստուն կուսանաց պէս,
 եւ մեր հոգւոց լապտերները
 Բարի գործովք պայծառացուր:

«Երկնչիմք ի քէն Տէր՝ զարհուրեալք ի պատաս-
 խանօյն, զամէնն ասելով եթէ սչ գիտեմ զձեզ»:

Ո՛վ Տէր՝ քեզնէ երկիւղ ունիմք,
 Պատասխանէ՛ք կրգարհուրիմք,
 Երբոր ասես. Ամէն ասեմ,
 Ձեմ ճանաչեր բընաւ ըզձեզ:

«Յորժամ գաս փառօք Հօր՝ գատել զտիեզերս ա-
 մենայն, շնորհեա՛ եւ մեզ Տէր կալ ի յաջմէ քուամէ»:

Հօր Աստուծոյ փառօքն որ գաս
 Բոլոր աշխարհքս գատելու,
 Մեզ ալ այս մեծ շնորհքն արա
 Որ քու աջ կողմըդ կենամք՝ Տէր:

«Բացցի մեզ դուռն ողորմութեան երկնաւոր փե-
 սային, եւ մտցուք ի յառագաստ ընդ իմաստուն
 կուսանսն»:

Բացուի մեզի ողորմութեան
 Դուռն երկնաւոր սուրբ փեսային,
 Մեք՝ ալ մըտնեմք առագաստը
 Այն իմաստուն կուսանաց հետ:

«Ժամանեցուք ընդ առաջ փեսային, եւ մտցուք
 ի յառագաստ նորա, զի մի մնացուք արտաքս որ-
 պէս գլխմար կուսանսն»:

Փեսին առաջը շուտ հասնիմք
 Որ ներս մըտնեմք առագաստը,
 Եւ ամօթով դուրս չըմընամք
 Նրման յիմար հինգ կուսանաց:

«Պայծառացին լապտերք հոգւոց մերոց, եւ բազ-
 մեցուցես զմեզ ընդ հրաւիրեալսն ի կոչումն ար-
 քայութեան երկնից»:

Պայծառ լուսով թող զարգարուին
 Մեր հոգեւոր լապտերները,
 Արքայութեան մէջ բազմեցուր
 Հրաւիրելոց հետ եւ ըզմեզ:

Շատ գեղեցիկ է նաեւ Հարցր, որոյ առաջին երեք տուններն ասոնք են. —

« Որ սքանչելիք ես ի բարձունքս Տէր, եւ ահաւոր ի մէջ երկրի անուն քո սուրբ. օրհնեալ ես Աստուած Հարցըն մերոց : »

Տէր, դուն յերկինս ըսքանչելի Աստուած ես, երկրիս վերայ ահեղ է սուրբ անունդ .

Օրհնեալ ես սիւ մեր հայրերուն Աստուածը :

« Որ զհաւատացեալսն ի քեզ պահեալ, եւ զչարսն պատժեալ գործակցօք ջրովք սուղմամբ յանդունդս :

Դուն պահեցիր հաւատացեալքդ անլընաս, Իսկ չարերուն տըւիր սաստիկ պատուհաս, Ջրոց անդունդը սուղելով զամէնքը :

« Որ հաստատեցեր ազգի մարդկան հրով փորձիլ ի յերկրորդումն. պահեա անարատ զքո փրկեալս : »

Անդարձ վրձումս որոշեր ես դու ինքնին Որ կըրակով մարդիկ նորէն փորձըւին. Դուն անարատ պահէ քո փրկածները :

Այս ետքի տունին իմաստն է թէ « Դուն սահմաներ ես արդէն որ մարդկային ազգս երկրորդ անգամուն կրակով մաքրուի. անարատ պահէ զմեզ որ քու փրկած ժողովուրդդ եմք, ինչպէս որ նոյ նահապետն ու իրենները ջրհեղեղէն ազատ պահեցիր : »

Այժմ այս ալ տեսնեմք՝ թէ սրբոց Հարց եւ աստուածաբանից մէջ ինչ կարծիքներ կան աշխարհիս ետքին, ու վերջի դատաստանին վերայ :

Թէպէտ սուրբ աւետարանին, եւ ընդհանրապէս հին եւ նոր կտակարանին խօսքերէն կարելի չէ պարզ եւ յստակ կերպով հասկընալ թէ ինչ պարագաներով պիտի լինին Քրիստոսի գալուստը, աշխարհիս վերջանալը, հասարակաց յարութիւնը, եւ վերջին դատաստանը, բայց նախ տարակոյս չկայ որ ասոնք հաստատուն ճշմարտութիւնք են եւ մասունք քրիստոնէական սուրբ հաւատոյ, ինչպէս որ Հաւատամքին մէջ ալ կտրկեցընէ մեզի սուրբ եկեղեցին ասել. « Հաւատամք . . . թէ գալոց է (Քրիստոս) նովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս . . . Հաւատամք ի յարութիւն մեռելոց, ի դատաստանսն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց. յարքայութիւն երկնից եւ ի կեանսն յաւիտենականս : » Երկրորդ՝ այս եւս ստոյգ է որ սուրբ Հարց եւ վարդապետք, ի հարկէ յառաքելոց առնելով գրով եւ աւանդութեամբ, եւ մանաւանդ սուրբ գրոց խօսքերուն վրայ հիմնելով իրենց վարդապետութիւններն ու կարծիքները, զանազան պարագաներ կպատմեն՝ աւելի կամ պակաս հաւանական : Գլխաւորներն ասոնք են .

Քրիստոսի գալստենէն մէկ քանի տարի առաջ պիտի գայ Նեոշ, որ Դերափրիսոսս ալ կասուի, այսինքն թշնամի եւ հակառակորդ Քրիստոսի : Ոմանք կարծիք կանեն թէ նա Հրէից ազգէն ու Դանայ ցեղէն պիտի լինի, հայոյիչ Աստուծոյ, տիրապետող աշխարհի, հաւածող քրիստոնէից եւ որդի կորստեան : Այս մտքով՝ ոմանք կարծեցին թէ նեոշ ներոն կայսրն է. — եւ մեր.

Հայերէն Անո խօսքը անկից առնուած կերեւի . — ոմանք՝ թէ Յուլիանոս ուրացողն էր . — ոմանք՝ թէ Արիստն էր . — ոմանք՝ թէ Մահմէտը եւ մահմէտականութիւնն է . ոմանք՝ թէ Քաղզիոյ մեծ յեղափոխութիւնը Հանող խռովարարներն են՝ շատը մէկի տեղ առնուած, եւ այլն : — Սակայն շատն ալ այս կարծիքէս են թէ Անո կասուի իրաւամբ որ եւ իցէ մարդ որ թշնամի է Քրիստոսի եւ քրիստոնէութեան :

Կասեն ոմանք թէ նեւը երեք տարի ու կէս պիտի անէ իրեն բռնակալութիւնն ու ինքզինքը աստուծոյ պէս պաշտել պիտի տայ : Այն միջոցին աշխարհք պիտի գան ենովք եւ Եղիա, ու Երուսաղեմի մէջ նեւին հակառակ քարոզու թիւններ անելով՝ Հրէից ազգը ի քրիստոնէութիւն պիտի դարձընեն . բայց նեւը զանոնք շուտով պիտի մեռցընէ նահատակէ : — Եւ այս իրենց կարծիքը կհաստատեն Յովհաննու Յայանութեան խօսքերովը . թէպէտեւ այն գրքին շատ խօսքերը մութ են՝ իբրեւ եղած եւ լինելու բաներու մարդարէական գուշակութիւններ :

Կասեն դարձեալ՝ թէ այն միջոցին պիտի լինի յանկարծ Քրիստոսի Տեառն մերոյ երկրորդ հալաւոր գալուստը, եւ նորա զօրութեամբը կամ հրամանովը նեւը պիտի մեռնի կորսուի : Յետոյ իսկոյն մեռելները յարութիւն պիտի առնուն՝ հրեշտակաց եւ հրեշտակապետաց փողերուն ձայնովը, եւ պիտի հաւաքուին ահեղ Դատաւորին առջեւը . եւ նա համառօտ՝ բայց հրապարակական ու մանրամասն քննութեամբ ամէն մարդու դատաստանը կտրելէն ետեւ, արգարները

պիտի զատէ առնու իւր հետը երկինք՝ ի վայելումն յաւիտենական վառաց արքայութեան իւրոյ, եւ մեղաւորները պիտի դատապարտէ ի յաւիտենական տանջանա դժոխոց, եւ այնուհետեւ աշխարհս կրակով պիտի այրի տոչորի փճանայ : Ոմանք կասեն թէ այս կրակէ հեղեղը առաջ պիտի պատահի, եւ յետոյ պիտի գայ Քրիստոս դատելու զմարդիկ :

Ասոնք եւ ասոնց նման ուրիշ շատ պատմութիւններ, պարագաներ, աւանդութիւններ, կարծիքներ կան զանազան գրուածոց մէջ՝ որ այս տեղ յիշատակելն աւելորդ է . վասն զի թէպէտ գլխաւօր դէպքերը, ինչպէս որ ասինք, հաստատուած են սուրբ գրոց բացայայտ խօսքերուն վրայ, ուստի եւ անտարակուսելի, բայց սնոնց պարագաներուն մեծ մասը լոկ կարծիքներ են՝ ոչ թէ ամենայն Հարց եկեղեցւոյ առ հասարակ, այլ միայն այս կամ այն հայրապետին կամ վարդապետին, եւ կամ շատ շատ՝ մէկ քանի վարդապետաց եկեղեցւոյ, ուստի եւ չեն կրնար համարուիլ վարդապետութիւնք ընդհանրական եւ առաքելական եկեղեցւոյն Քրիստոսի, եւ մասունք հաւատոյ : Այսու ամենայնիւ եղած են Հին եւ նոր ժամանակները ոչ սակաւ գիտուն եւ կէս գիտուն անձինք ամէն զզգաց մէջ, որ աշխատեալ են այս անորոշ խնդիրներուն վրայ եղած կարծիքները հաւաքելու, եւ իրենց անձնական կարծիքներն ու մեկնութիւններն անոնց վրայ աւելցընելով՝ կեղակարծ, անստոյգ եւ անհիմն պարագաներով միամիտ հաւատացելոց միտքը անգիտութեամբ պաշարելու կամ պղտորելու :

Օրինակի համար, նեռին ինչ մարդ լինելուն վրայ այնչափ իրարմէ տարբեր կարծիքներ եղած են որ անշուշտ տւելի իրաւունք ունին անոնք որ կասեն թէ սր եւ իցէ մեծ չարագործ, սուտ մարդարէ, Բրիստոսի ու քրիստոնէից թշնամի բռնակալ մարդ՝ կըրնայ նեռ եւ դերաֆրիսոս ասուիլ, ինչպէս որ յիշեցինք:

Հապա սւր թողումք զանոնք որ զուր տեղը խելք յոգնեցուցեր են, եւ ոմանք մինչեւ ցայժմ ալ կը յոգնեցընեն, որ հասկընան թէ արգեօք նեռին անունը ինչ պիտի լինի: Սոքա տեսնելով որ Յովհաննու Յայտնութեան ժԳ գլխոյն մէջ գրուած է թէ «Գազանին (այսինքն նեռին) անունը պիտի լինի 666 թիւը,» կաշխատին զանազան հաշիւներ անելու՝ Հրէից կամ Յունաց կամ Լատինացոց, ոմանք նաեւ Արաբացոց կամ Հայոց այբուբեններուն թուական նշանակութենէն հանել անուն մի, եւ յարմարցընել նեռին. զոր օրինակ ոմանք Տրայիանոս Կայսեր Ուրպիոս անուանը յունարէն տառերովը ձեւացուցին 666 թիւը. ոմանք Դիոկղեսիանոսի անուան լատին տառերովը, ոմանք Յուլիանոս ուրացոյի նոյնպէս լատին տառերովը. ոմանք Ղաթեր անուան եբրայական տառերովը. ոմանք Ղասին անուան յունական տառերովը. եւ ոմանք եբրայական եփօն սոսոնի եփոյսի գաւօզ բառերուն տառից թուական զօրութիւնը հաշուի առնելով, որ կնշանակեն Բարձրեալ Տերն մեր Ասուած սուրբ: Այս վերջի մեկնութիւնն ալ նոր ապացոյց մի է այդ հետաքննութեան աւելորդ եւ անօգուտ լինելուն: Թերեւս աւելի հաւանական է այն կարծիքը՝ թէ 666

թիւը անորոշ համրանքի պէս գրուած է Յայտնութեան գրքին մէջ, եւ կցուցընէ առ հասարակ սր եւ իցե մոլորութիւն որ հակառակ է Քրիստոսի եւ լորու վարդապետութեանցը:

Ասով ալ կհասկըցուի սր նոյնպէս անօգուտ աշխատութիւն է վնասըռտելը թէ արգեօք երբ կամ սր տարին աշխարհք պիտի գայ նեռը. մինչեւ ցայժմ ինչ տարիներ որ նշանակուած էին զանազան անձինքներէ, եկան անցան՝ առանց նեռին երեւնալուն, տարակոյս չկայ որ այսուհետեւ նշանակուելիքներն ալ նոյնպէս կանցնին. եւ այսպէս հաստատուն կմնայ Բրիստոսի Տեառն մերոյ այսօրուան աւետարանին մէջ շատ անգամ ասածը թէ «Վասն աւուրն այնորիկ եւ ժամու ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք երկնից եւ ոչ Որդի, բայց միայն Հայր.» այսինքն թէ Այն օրուան ու ժամանակին երբ գալիքը գիտցող չկայ եւ ոչ իսկ հրեշտակաց մէջ. այլ եւ ես՝ իբրեւ սոսկ մարդ եւ որդի մարդոյ (ինչպէս որ կերեւնամ ձեզի), կրնամ ասել թէ չեմ գիտեր, այլ միայն Հայրն իմ գիտէ: Ասել կուզէր թէ դուք այդ բաներուն ժամանակը եւ անօգուտ պարագաները փուճ տեղը կուզէք գիտնալ, եւ ստոյգ նշաններով հասկընալ՝ թէ ես երբ պիտի գամ, կամ աշխարհիս վերջը երբ պիտի լինի. անոր ազէկը՝ նայեցէք որ միշտ արթուն կենաք եւ պատրաստ, վառ պահէք ձեր հաւատոյ լապտերը՝ ողորմութեան եւ ուրիշ բարեգործութեանց եղովը, զուարթերես ելնէք ահաւոր եւ անաչառ դատաւորին

առջեւը, եւ արժանի լինիք մտնելու՝ իբրեւ բարի եւ հաւատարիմ ծառայք՝ ձեր տիրոջը յաւիտենական հարսանեաց ուրախութեանը մէջ:

Յաւիտենական ուրախութիւնը այն է «Զոր ակն ոչ ետես՝ կասէ Պօղոս առաքեալը, եւ ունին ոչ լուաւ, եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ. զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց.» այսինքն այնպիսի ուրախութիւն մը պատրաստեր է Աստուած իւր սիրովը վառուած հաւատացելոց, որ ոչ մարդկային աչք մը տեսած է, ոչ ականջ լսած է, եւ ոչ մէկուն խելքը անոր հասած է: Այս է ահա այն յառիստեակաւ կեանք, այն արհայրաբանը, որում կցանկամք եւ յոյս ունիմք հասնելու ամէնքս այս անցաւոր կեանքէս ետքը: Ասել է թէ յաւիտենական երանութեան մեզի համար պատրաստուած լինելը յայտնի է, թէ եւ չեմք կըրնար այժմէն հասկընալ թէ այն երանութիւնը ինչ բան է: Միայն այսքանը գիտեմք սուրբ գրոց խօսքերէն եւ սրբոց Հարց վարդապետութենէն որ երանական կենաց մէջ ամենեւին մէկ չարիք մը պիտի չըզանուի, եւ ամենայն բարիք պիտի գտնուի. ինչպէս որ դժոխքին մէջ՝ անոր հակառակ՝ ամէն չարիք եւ թշուառութիւն անպակաս պիտի գտնուի՝ անխառն սր եւ իցէ աղէկութենէ ու հանգստութենէ:

Սուրբ գիրքը կասէ թէ երկնից արքայութենէն բշտած՝ հալածուած՝ հեռու են ամէն տեսակ ցաւեր, վիշտեր, տրամութիւններ. «Ուստի մերժեալ են ցաւք եւ տրամութիւնք եւ հեծութիւնք.» եւ այս ամենայն խեղճութեանց պատճառը՝ որ է մեղքը՝ ամենեւին

տեղիք չունի այն երանութեան մէջ: Բայց երկնից արքայութեան արժանի եղողներուն ամենամեծ երանութիւնը յայնմ է որ զԱստուած կժառանգեն յաւիտեան, եւ անով անկարօտ կլինին ուրիշ սր եւ իցէ անցաւոր միտարութեան: Այս յուսով էր որ կասէր Դաւիթ մարգարէն. «Աստուած սրտի իմոյ, բաժին իմ Աստուած յաւիտեան.» եւ նոյն յուսով էր որ հազարաւոր ու բիւրաւոր նահատակներ, ճգնաւորներ, կուսանքներ եւ ամենայն վիճակէ արգարներ արհամարհեցին՝ ոտքի տակ առին աշխարհիս անտի հանգստութիւնները, մեծութիւնները, պատիւները, եւ իրենց մարմնաւոր կեանքը, եւ յաւիտենական կենաց հասնելու փափաքեցան, միշտ աչքերուն առջեւն ունենալով Քրիստոսի խոստմունքը թէ «եւ երթիցեն արդարքն ի կեանսն յաւիտենականս.» որում արժանի անէ զմեզ նա ինքն Տէրն մեր Յիսուս Քրիստոս, եւ նմա փառք եւ գոհութիւն ընդ Հօր եւ սուրբ Հոգւոյն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ե



ԾԱՆՈՒՅՈՒՄՆ.

ԼՍԱՐՄՆ անունով ընթերցմունքները մեզի հնարել տուողն եղած է գլխաւորապէս մերազնեայց մէջ տարածուիլ սկսած ուսումնասիրութիւնը, որով կարողալ չգիտցողներն անգամ կցանկան գոնէ *լսել* մարդու հարկաւոր գիտելիքները ¹:

Մէկ կողմանէ այս ազգային ուսումնասիրութեան օրէ օր աճիլը տեսնելով, եւ միւս կողմանէ յորդորուելով քանի մի արժանապատիւ եկեղեցականաց խօսքերէն, ուրախութեամբ ձեռք զարկինք այս աշխատութեան, եւ այնպիսի ընդարձակ շրջան մի տրւինք ասոր՝ որ ամէն վիճակի անձինք եւս իրենց պիտոյիցն ու ախորժակին յարմար նիւթեր գտնեն մէջը:

Վասն զի *հոգեշահ պատմութեանց եւ յւրաւոյց* կարգը դրած եմք ամէն տեսակ կրօնական, եկեղեցական, եւս եւ բարոյական գիտելիքները, ինչպէս սուրբ գրքոց պատմութիւններ, տէրունական տօներու խորհուրդներուն ու արարողութեանց բացատրութիւններ, մեծամեծ սրբոց՝ մանաւանդ ազգային սուրբերու վարքեր, եւ այլն: Իսկ *կենցաղոգոյս գիտելեաց* կարգին մէջ կդասաւորեմք ո՛ր եւ ի՞նչ արտաքին, այսինքն պատմական, աշխարհագրական, բնագիտական՝ օգտակար տեղեկութիւններ:

Այսպիսի աշխատութեան ընդհանրապէս երկու գլխաւոր յատկութիւն տալը ամենահարկաւոր ճանչցեր եմք: Առաջինը այս՝ որ ոճը ո՛րքան կարելի է պարզ լինի, այնպէս որ ամէն մարդ կարենայ առանց դժուարութեան հասկընալ: Երկրորդը այս՝ որ ամենայն տօն կամ պատմութիւն կամ գիտելիք առանձին տետրակով հրատարակուի, եւ մէկ տետրակը միւսին հետ կապ չունենայ. այնպէս որ ե՞ւր մէկը ամէն տետրակները չկարողանայ կամ չկամենայ ունենալ, արդէն առաճները անկատար ու պակասաւոր գրքի պէս չմնան, եւ իրենց ամբողջութիւնը չկորսնեն. միանգամայն ամէն տետրակներն ալ ստանալ կամեցողը կարենայ շատը ի միասին կազմել տալ հատոր հատոր՝ երբոր նոյն տեսակ նիւթերու վերայ եղած լսարանները շատնան:

(1) Մտտեաց Ազգանի 1861 ամին, էջ 49.

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ.

Աւագ Երկուշաբթի.

ՊԱՏՐԱՍՏՔ Ի ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

Ծնունդ եւ Յայտնութիւն Տեառն.

Տեառնընդառաջ.

Աւագ Զորեքշաբթի.

Աւագ Հինգշաբթի.

Աւագ Ուրբաթ.

Զատիկ սուրբ Յարութեան Տեառն.

Համբարձումն.

Հոգեգալուստ.

Վարդափայտ.

Վերափոխումն.

Սուրբ Խաչ.

Սուրբ Հռիփսիմեանք.

Ս. Կրիստոս Լուսաւորիչ.

Որդիք եւ թոռունք սրբոյ Լուսաւորչին.

Մեծն Ներսէս Պարթեւ.

Ս. Սարգիս Զօրավար.

Յօբ Երանելի.

Թագէտս առաքեալ, Ս. Սանդուխտ Կոյս,
եւ Ս. Շուշանիկ.

Երկինք.

Արեւն ու Մուրճիկները.

Ջերմութիւն եւ Ջերմաչափ.

Կաստանդնուպօլսոյ առումն ի Տաճկաց.

Հեռագիր.



84

84

2013

« Ազգային գրադարան



NL0269376

